Արձանագրություն 1-16 ԸԺ

«Արփա-Սևան » ԲԲԸ տարեկան ընդհանուր ժողովի

ք. Երևան 13 մայիսի 2016թ.

1. Ընկերության թվով 20452 բաժնետոմս ունեցող անդամներից տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էին թվով 15381 բաժնետոմս ունեցող անդամներ /բաժնետերեր, որոնց պատկանում է բաժանորդագրված բաժնետոմսերի 75,2%-ը/:
2. «Արփա-Սևան» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) խորհրդի քարտուղար Զորիկ Վարդանյանը ժողովի մասնակիցներին տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է, ընդհանուր ժողովը համարեց բացված և առաջարկեց ընտրել նախագահություն, ձայների հաշվիչ հանձնաժողով և քարտուղարություն:

2.1. Նախագահության կազմն առաջարկվեց 3 հոգուց.
նախագահ՝ Արմեն Հակոբյան
անդամներ՝ Պարույր Հակոբյան, Կարինե Նավասարդյան:
Բաց քվեարկությամբ նախագահության կազմն ընտրվեց միաձայն:

2.2. Ձայների հաշվիչ հանձնաժողովի կազմն առաջարկվեց 3 հոգուց.
նախագահ՝ Աշոտ Գյուլումյան
անդամներ՝ Նոննա Յախշիբեկյան, Անահիտ Հայկարամյան
Բաց քվեարկությամբ ձայների հաշվիչ հանձնաժողովի կազմն ընտրվեց միաձայն:

2.3. Քարտուղարության կազմն առաջարկվեց 1 հոգուց՝ Զորիկ Վարդանյան:
Բաց քվեարկությամբ քարտուղարը ընտրվեց միաձայն:

3. Ժողովի նախագահ Արմեն Հակոբյանը ներկայացրեց օրակարգը.

3.1. Ընկերության 2015թ.տարեկան հաշվետվության հաստատումը;
3.2.Ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը;
3.3.Շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման մասին որոշման ընդունումը;

4.Օրակարգի առաջին հարցի՝ ընկերության 2015թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ զեկուցումով հանդես եկան՝
4.1.Ընկերության գլխավոր հաշվապահ Սեդա Փարսյանը: Նա ընդհանուր ժողովի մասնակիցներին ներկայացրեց 31.12.2015թ. դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին՝ Ընկերության և նրա դուստր «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ համախմբված հաշվետվությունները:, ըստ որի՝

- Ընկերության ակտիվները կազմել են 5 392 972 հազ.դր. որից՝ ոչ ընթացիկ ակտիվները՝ 3 361 736 հազ.դր, ընթացիկ ակտիվներ կազմել են՝ 2 031 237 հազ.դր:
- Ընկերության սեփական կապիտալը կազմել է 3 883 361հազ.դր, որից՝ կանոնադրական կապիտալը - 51 130 հազ.դր, կուտակված շահույթը – 3 771 652 հազ.դր, պահուստային կապիտալը - 60 580 հազ.դր:

- Ոչ ընթացիկ պարտավորությունները կազմել են – 120 318 հազ.դր, ընթացիկ պարտավորությունները՝ 1 389 294 հազ.դր:
- Հիմնական միջոցների արժեքը կազմել է 5 407 329 հազ. դր., կուտակված մաշվածությունը՝ 2 704 941 հազ. դր., հաշվեկշռային արժեքը՝ 2 702 388 հազ. դր.: Հիմնական միջոցների ընդհանուր մաշվածությունը կազմում է 50.0 տոկոս:

Ֆինանսական արդյունքների վերաբերյալ զեկուցողը տեղեկացրեց, որ՝

- աշխատանքների, ապրանքների ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 2 965 544 հազ.դրամ,
- իրացված աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը կազմել է 2 623 510 հազ.դրամ, վարչական ծախսերը կազմել են 209 359 հազ.դրամ;
- գործառնական գործունեությունից շահույթը կազմել է 72 575 հազ.դրամ;
- ֆինանսական եկամուտները կազմել են 5 835 հազ. դրամ;
- Շահութահարկի գծով ծախսը կազմել է 25 751հազ.դրամ;
- Զուտ շահույթը կազմել է 52 660 հազ.դրամ:

4.2. Ընկերության գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյանը:
Նա ժողովի մասնակիցներին տեղեկացրեց Ընկերության 2015թ. արտադրա-տնտեսական գործունեության տարեկան ընդհանուր արդյունքներին, յուրաքանչյուր առանձնացված ստորաբաժանման կողմից կատարված շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալներին, նրանց կողմից կատարված ծախսերին, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթին:

4.3. Ընկերության խորհրդի քարտուղար Զորիկ Վարդանյանը ժողովի մասնակիցներին ներկայացրեց 2015թ. կորպորատիվ կառավարման հայտարարագիրը և առաջարկեց հաստատել այն:

Ժողովի նախագահ Արմեն Հակոբյան առաջարկեց լսել Ընկերության Ֆինանսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը, որից հետո քվեարկության դնել Ընկերության տարեկան հաշվետվության հաստատման հարցը:

5.Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցան՝

5.1. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամ Սպարտակ Եղիյանը: Նա ընդհանուր ժողովի մասնակիցներին տեղեկացրեց վերստուգող հանձնաժողովի կողմից իրականացված Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքին՝ համաձայն որի, 2015թ. ֆինանսական հաշվետվությունները, ֆինանսական վիճակի, ինչպես նաև ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր: Այնուհետ զեկուցողը ներկայացրեց ընկերության վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի, ստուգումների արդյունքում ընկերության տարեկան հաշվեկշռում, հաշվապահական հաշվառման վարման փաստաթղթերում, ֆինանսական և տարեկան այլ հաշվետվություններում տարբերություններ կամ սխալներ չեն հայտնաբերվել և հաստատում են տվյալ փաստաթղթերում տեղեկությունների հավաստիությունը:

5.2. Ընկերության աուդիտն իրականացնող «ԹՄ ԱՈՒԴԻՏ»-ի գլխավոր տնօրեն Թաթուլ Մովսիսյանը ժողովի մասնակիցներին տեղեկացրեց, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2015թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա գործունեության արդյունքների և դրամական

հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:
Ժողովի նախագահը քվեարկության դրեց Ընկերության տարեկան հաշվետվությունների հաստատման հարցը:

6.Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ 15381 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով ընկերության տարեկան հաշվետվությունները հաստատվեցին:

Վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունը և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը դրվեց քվեարկության:

7. Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ 15381 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունը և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը հաստատվեց:

8.Օրակարգի երրորդ հարցի՝ շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման մասին ելույթ ունեցավ ժողովի նախագահ Արմեն Հակոբյանը: Զեկուցողը, ժողովի մասնակիցներին ներկայացրեց, որ 13.05.2015թ. – 13.05.2016թ. ընկած ժամանակահատվածում բարեգործական, նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, ինչպես նաև այլ նպատակների համար Ընկերության գլխավոր տնօրենի կողմից օգտագործված գումարների մասին հաշվետվությունը, ըստ որի «Արփա-Սևան» բարեգործական հիմնադրամին տրամադրվել է 14 521.0 հազ. դրամ, տարբեր ոչ առևտրային կազմակերպություններին, որպես նյութական օգնություն տրամադրվել է 9 060.0 հազ. դրամ, այլ կազմակերպություններին և անհատ անձանց՝ 7 807.3 հազ. դրամ, որոնց ընդհանուր գումարը կազմում է է 31 388.3 հազ. դրամ :
Այնուհետև ժողովի նախագահ Արմեն Հակոբյանը ժողովի մասնակիցներին ներկայացրեց խորհրդի կողմից տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ նախապատրաստված որոշման նախագիծը, համաձայն որի առաջարկվում է 2015 թվականի զուտ շահույթից և չբաշխված շահույթից՝ 80 000 հազ. դրամ օգտագործել շահութաբաժինների վճարման համար, 50 000 հազ. դրամ տրամադրել Ընկերության գլխավոր տնօրենին մինչև հաջորդ ընդհանուր ժողովը ընկած ժամանակահատվածում նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, բարեգործական, ինչպես նաև այլ նպատակների օգտագործման համար:

Շահութաբաժինների վճարման գումարի չափի, ինչպես նաև բարեգործական, սոցիալական և նյութական օգնության նպատակով ծախսված գումարների չափի վերաբերյալ ելույթ ունեցան՝ Պարույր Հակոբյանը, Արտաշես Ղազարյանը:

Քննարկությունների արդյունքում քվեարկության դրվեց շահույթի բաշխման հետևյալ առաջարկությունը՝

- Հաստատել գլխավոր տնօրենի կողմից նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, բարեգործական, ինչպես նաև այլ նպատակների օգտագործման համար կատարված 31 388.3 (երեսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ ծախսերը:
- 80 000 000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ դրամ տրամադրել շահութաբաժինների վճարման համար:

- 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ տրամադրել Ընկերության գլխավոր տնօրենին մինչև հաջորդ ընդհանուր ժողովը ընկած ժամանակահատվածում նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, բարեգործական, ինչպես նաև այլ նպատակների օգտագործման համար:
- 2015թ. տարեկան շահութաբաժինների վճարումը սկսել որոշման ընդունման պահից 10 օր անց և ավարտել մեկ տարվա ընթացքում:

9. Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ 15381 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունվեց:

Այդքանով «Արփա-Սևան» ԲԲԸ ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքը:

Սույն արձանագրությանը կցվում է «Արփա-Սևան» ԲԲԸ՝

- 2015թ. Տարեկան հաշվետվությունը;
- 2015թ.Կորպորոտիվ Կառավարման հայտարարագիրը;

«Արփա-Սևան» ԲԲԸ

Ընդհանուր ժողովի նախագահ՝ Արմեն Հակոբյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ Զորիկ Վարդանյան

Սույն արձանագրությանը կազմված է երկու օրինակով:
Արձանագրության կազմման ամսաթիվը՝ 17.05.2016թ.: